



## ԳՐԻԳՈՐ ՀԱԿՈԲՅԱՆ

### ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ՇԱՐԱԿԱՆԵՐԸ

Գրիգոր Լուսավորչի թոռան թոռը, Ներսես Մեծի որդին՝ Սահմակ Պարթևը, ծնվել է Կեսարիապում: Կրթությունը ստացել է Բյուզանդիայում, լավ հեղինագետ էր: Հայաստան գալուց հետո ամուսնացել էր, բայց երբ կինը վախճանվեց, դարձավ եկեղեցական: Ուներ 60 աշակերտ, որոնց հետ վարում էր մեկուսի կանք: Խորով Գ-ի օրով ընտրվեց կաթողիկոս՝ իբրև Սասուրակեսի հաջորդ (387): Ամրատանձեց պարսից թագավորի առաջ և իբրև հունասեր՝ գահընկեց արվեց: Վոամշապուհի գահակալությունից հետո գնաց Պարսկաստան, Անդրկայացավ Վոամ թագավորին, արդարացավ և նորից հատեց հայրապետական գահին (390 թ.): Հայոց Վոամշապուհ թագավորի աշակցությամբ Մեսրոպ Մաշտոց վարդապետի հետ միասին հիմքը դրեցին հայոց գրի ու գրականության: Թարգմանել է և Գիրքը և ուրիշ գրքերը: Պարսկանք կուսակցությունը դժոնի լինելով Արտաշեն Գ թագավորից, ուզեց գահընկեց անել Արան, Զնշել հայոց Արշակունի թագավորությունը և փոխարենը պարսիկ մարզպան դնել: Սահմակ Պարթևը բողոքեց այդ որոշմանը դեմ, որի համար գրկվեց կաթողիկոսական գահից և մնաց Պարսկաստանում մինչև 482 թիվը, երբ վերադարձավ Հայաստան, հաստատվեց Բագրելանդում, քրաղվեց գրականությամբ և վախճանվեց 438 թվին:

Թաղվել է Աշտիշատում: Բացի թարգմանություններից Սահմակ Պարթևին են վերագրվում կանոններ, թղթեր, աղոթքներ և շարականներ:

\* \* \*

387 թվականին Հայաստանը բաժանվեց բյուզանդական և պարսկական աշխարհակալ պետությունների միջև: Թեպետ արևելյան Հայաստանում դեռ մնում էր Արշակունիների թագավորությունը, բայց գրեթե միայն անունով, որովհետև նա չէր կարող առաջկա պես հանդես գալ իր ազգային ու պետական շահերը պաշտպանելու դիրքերում:

Ժամանակի հասարակական-քաղաքական պայմաններն իրենց հետ անհրաժեշտորն ընթառի էին պայքարի նոր բնագավառներ ու ձևեր: Երբեմնի քաղաքական պայքարին այժմ փոխարինելու էր գալիս մշամության պայքարը: Թեև գաղափարական, կրոնական պայքարը Արշակունիների թագավորության անկումից առաջ էլ տեղի ուներ հայերի ու պարսիկների միջև՝ քրիստոնության սկզբանական շրջանից, բայց այն առանձնապես սուր կերպարանք ստացավ: Ծագուի Բ-ի օրով (310—379) և քանի գնաց՝ ավելի սաստկացավ: Ստեղված քաղաքական դյությունը

ստիպում էր պարսիկներին Հայաստանում քրիստոնեությունը վերացնել և նրա տեղ տարածել զրադաշտական կրոնը՝ բյուզանդացիների ազդեցությունը վերացնելու հպատակով։ Բայց Արշակոնիների թագավորության անկումից հետո հայ եկեղեցին ոչ միայն չթուլացավ, այլև նա հանդեռ եկավ որպես համագգային հեղինակավոր, կենտրոնական մի իշխանություն։ Անհա թե ինչո՞ւ այդ ժամանակ պարսիկները այնքան խոշոր նշանակություն էին տալիս քրիստոնեական կրոնի ու հայ եկեղեցու դեմ մղվող պայքարին և ամեն կերպ աշխատում էին եթե ոչ վերացնել, գոնք չեղոքացնել այն, պարսկական քաղաքականության գործիք՝ Սուրբմակների և Բրդիշոների միջոցով։ Բայց հայ ժողովրդի քաղաքական ճգնաժամի հետ միասին պատմության հրապարակի վրա հանդեռ է գալիս անհնախընթաց մոտավոր մի վերածնություն, մի գործեղ մշակութային շարժում, որ դարձեր շարունակ բախտորոշ պիտի լիներ հայ ժողովրդի համար և փրկեր նրան մեծ ազգերին կու գնազոր ո ոչնչանարուց։ Այդ շարժումը գիշավորել էին Սահմակ-Մեսրոպ և Արշակոնյաց իշխանությունը։ Եվ քանի որ այդ շրջանում ազգի ինքնուրույնությունը պաշտպանելու ճակատում ամենաուժեղ միջոցներից մեկը հայ եկեղեցին էր, ուստի անհրաժեշտ եղավ կատարելագործել այդ հոգեկան զենքը։ Թեև հայերի քրիստոնեությունը ընդունելու օրից շուրջ հարյուր տարի էր անցել, բայց քանի որ ժամանացությունը կատարվում էր հունակեն և ասորերեն անհնախանակ լեզուներով, այդ կրոնը ժողովրդի մեջ դեռ չէր արմատացել։ Ուստի, գրեթի գյուտի ո հետո առաջին եերթին անհրաժեշտ էր «ազգայնացնել», «հայացնել» եկեղեցին։ Այդ գործի համար հարթակվոր էր ունենալ նաև հայերեն հոգևոր երգեր։ Ինչպես գրի որ գրականության, ամենա էլ մեր ազգային սոսչին շարականների հիմնադիրները հանդիսանում են Սահմակ Պարթևը և Մեսրոպ Մաշտոցը։

\*

\*

Սահմակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը ոչ միայն մեր սոսչին շարականագիրներն են, այլև հոգևոր երգի եղանակների հեղինակները։ Երբ բաց ենք անոն մեր Շարակնոցը, «Յօրինող շարականաց» սոսչաբանում կարդում ենք։

1. «Մեծն Մեսրոպ ասաց զկարգն ապաշխարութեան...».

2. «Եւ սուրբն Խահմակ զԱւագ շարաթուն»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Շարական», Երուսաղեմ, 1936, էջ 5:

Սահմակ Պարթևի գրած շարականներն երկու տասնյակից ավելի են, որոնց մի մասը վերաբերում է Ծաղկազարդին, մի մասը՝ Ավագ հինգշաբթի, ուրբաթ և շաբաթ օրերին, և մի մասն էլ՝ Ղազարի հարությանը։ Բայց այստեղ մենք քննության ենք սույն Սահմակ Պարթևի գրած ոչ միայն այդ կանոնական շարականները, որոնք ընդունված են ժամանակագույն մեջ և կան մեր Շարակնոցում, այլև նրա գրչին պատկանող, ժամանակագույնից ու Շարակնոցից դուրս մնացած «Շարականներ», որոնց մի մասը նույնական նվիրված է Ծաղկազարդին և մի մասն էլ՝ Ղազարի հարությանը։ Սահմակ Պարթևը գրել է յոյժ շարական, որոնցից չորսը կանոնականն են («Թագավոր գորով», «Յորժամ եկա Յիսուս», «Զգալուս ք Քրիստո այսօր», և «Ե յարութեան ասոր»), իսկ երեքը՝ պարականներ («Որ զերին մանկունն ի հնոցին ասրեցուցէր», «Ուրախ լեր մայր լուսոյ» և «Բարեքանեալ»)։

Ծաղկազարդի տոնին վերաբերվող բոլոր շարականների հիմնական գաղափարը, բովանդակությունն այն է, որ ըստ Ավետարանի, Քրիստոսը համեստորեն, նատած ավանակի վրա՝ մտնում է Երուսաղեմ՝ որպես «Նոր Դավիթ»։ Այս շարականները համակած են ընծության զգացմունքներով ու բացականություններով։ Ամբողջ Երուսաղեմը շերմ ոգևորությամբ է դիմավորում ավանակի վրա հատած Փրկչին։ Ի պատիվ Փրկչի, ծերութեները նոր ծաղկած ձիթենու ճյուղերով, իսկ տղաները՝ արմավենու ուստեղով ընդառաջ են եկնում և բոլորը միաբերան փառարանության երգեր են ասում։

Երբեն ոստովք ձիթենենօր,  
Եւ տղաներ ոստովք արմավենենօր,  
Եւ երամ-երամ դասուք աղաղակէին՝  
Ուստանա, օրինեալ, եկեալ ի խանութը  
Տեամ<sup>2</sup>։

Ուրախության մեջ են ոչ միայն մարդիկ, այլև բնությունը։ Մարդկանց, ողջ քաղաքի հետ միասին ընծության մեջ է նաև Երուսաղեմի Սիոն լոռը։

Ցընծացաւ սուրբ Սիոնն,  
Ցերկեւցան սուրբ եկեղեցիք,  
Եւ խնդութեամբ բազմա եկին ընդառաջ,  
Օրինէին զգալուս ք Փրկիչ յաշ-  
խարի<sup>3</sup>։

Ամենից շատ ուշախացել են նաև մանուկները։

<sup>2</sup> Անդ, էջ 313—315:

<sup>3</sup> Ա. Վ. Ամաստումի, Հին և նոր պարականն շարականներ, Վաղարշպ., 1911, էջ 88—91։

<sup>4</sup> «Շարական», էջ 313։ Այս և բոլոր մեջքերության շարականները մեր կողմից չափատողված են։

<sup>5</sup> Անդ, էջ 314։

Ի լեռնէ Չիյենեաց մանկունք  
Տարածանէին զհանդերձս իրեանց...  
Ոստովք և տերևոք ձիյենեօք՝  
Երրայեցոց մանկունքն օրինէին։  
Յնձության մեջ են նաև Երուաղեան ու  
առաջին քրիստոնեական եկեղեցին։  
Ուրախ լե՛ր Երուաղեան քաղաք,  
Եւ ցընծա Սիրով՝ մայր եկեղեցի։  
Ուրախությունը խորանով ու ծավալվե-  
լով վերածվում է հանդիավոր տոնախմբու-  
թյան, որին տարերապերէն մասնակցում են  
բոլոր՝ անկախ հասակից ու սեղից։  
Ի ծերոց բրդինեալ օրինութիւն,  
Եւ ի տղալոց փառարանութիւն։  
Այս տոննին նվիրված պարականուն երեք  
շարականներից երկուը «Երգարանեաւ»  
փառարանություն են՝ ուղղված Փրկչին,  
«Վեցեկան սերովեներին» և «զուարժունը  
երկնից» հրեեններին։ Այստեղ արտա-  
հայտվում են նաև քանատեղծի հուզերը։  
Նա ևս հրճվում է երուաղեմցիների հետ՝  
Փրկչի գալստյան առթիվ։  
Ընդ նույն և մեք երգեսոյուր,  
Ովսաննա Բարձրելոյն, որ փրկեաց  
զնեզ։

Ավելի քնարական ու գեղեցիկ է պարա-  
կանուն Մեծացուցեն։ Եթե Երուաղեանի  
բնակիչները ցնձության հորդոր էին ուղղում  
իրենց հայրենակիցներին, քաղաքն և նովե-  
իկ լեռներին, ապա այս շարականուն հե-  
նինակը այդ նոյն զգացմունքներով ու հոր-  
դորներով դիմում է Տիրամորք։

Ուրախ լեր մայր լուսոյ, Աստուածածին,  
Քանզի ի քէն մարմնացաւ Աստուած,  
Այսօր ի վերայ յաւանակի հատել հանե-  
ցաւ։<sup>6</sup>

Տնի և Քրիստոսի Երուաղեամ գալու մա-  
սին խուելոց հետո, հետինակը շրշափում է  
Փրկչի մարդեռության խորհուրդը և նպատա-  
կը՝ ներդնելով այդտեղ նաև դավանարա-  
կան գաղափարներ։

Որ ի Հօրէ առաքեցաւ Բանն,  
Եւ յորովանի քում բնակիլ հանեցաւ։

Որ ի յերկի երկեցաւ,  
Եւ ընդ մարդկան շրշեցաւ,

...Ի դասուց Երրայեցոց բարերանեցաւ։<sup>7</sup>

Ծաղկազարդին վերաբերող կանոնական  
և պարականուն վերոնիշյալ բոլոր շարական-

ները գրված են պարզ ու մատչելի լեզվով,  
խոր հոգականությամբ, որտեղ պարզ երե-  
վում է Դավթի սաղմուների թողած ազդե-  
ցույթունը։ Սահակ Պարթևի գրած շարա-  
կանների երկրորդ խումբը վերաբերում է  
Ղազարի հարությանը, որը նովակն մտնում  
է Ավագ շարաթի կանոնի մեջ։ Այս շարա-  
կանների գաղափարն ու թեման հեղինակը  
վերցրել է Հովհաննեսի Ավետարանի ԺԱ.  
Գլուխ, որ խովում է Ղազարի հարության  
մասին։

Ղազարի հարությանը վերաբերող շարա-  
կանները հետևյալներն են՝ «Այսօր գոյով ի  
Բեթանիա» (օրինութիւն), «Որ ի չորեք-  
Կերպեան կենդանեաց փառարանիա» (Ո-  
ղորմեա), «Աղրիու անմահութեան» (Տէր  
յերկնից), «Որ ի յերկնից իշեր» (Ծաշու) և  
մի պարականուն Մեծացուցեն «Տուն տնօրէ-  
նոյթեան» սկսվող բառերով։

Սահակ Պարթևի այս կարգի շարական-  
ներն ավելի ևս աշքի են ընկնում իրենց  
պարզությամբ ու լեզվով։ Վերոնիշյալ հինգ  
շարականների մեջ տարբեր ձևերով ու տար-  
բեր խորպերով ներկայացվում է Ղազարի  
հարության հրաշքը, Քրիստոսի պարզու-  
թյունն ու մարդասիրությունը։ Եթե Ծաղկա-  
զարդի տոնի շարականներում երրայեցի  
մարդիկ, մանավանդ փոքրերը, դիմավորում  
էին Երուաղեամ մտնող Հիսուսին՝ ծիթենու  
և արմավենու նոր, կանչած ուստերով, ցըն-  
ծության երգերով ու փառարանությամբ,  
ապա այստեղ բեթանիացիները, դարձյալ  
մեծ մասամբ մանուկները, «սքանչացեալ»  
պատմում են բոլորին Քրիստոսի կատարած  
հրաշքը, փառարանում Նրան և իրենց հա-  
մար է երկար կանք խնդրում։

Այսօր գոյով ի Բեթանիա,  
Երրայեցոց մանկունքըն,  
Սքանչացեալ ասէին՝  
զՄարիամու զեղբայրըն  
ի բաղմանէ լարոցեալ՝  
Որդուն Մարիամու,  
Կենդանարար Քրիստոս  
Կեցն ըզմեզ։<sup>8</sup>

Այս փոքրիկ շարականում միաժամանակ ցուց է տրվում, որ Փրկչի ամենազոր հրա-  
մանով «դողացաւ մահը», «պարտեցաւ դը-  
ժոխըր» և «զուծաւ ապականութիւնը» մի ան-  
պատում հրաշգործությամբ, այն է՝ չորս  
օրվա մահացած ու թաղված Ղազարի հա-  
րությամբ։ Ըստ շարականի, Ղազարի հարու-  
թյան ցնցող դեպքը ունեցել է մի որիշ՝ ավե-  
լի մեծ ու սքանչելի խորհուրդ ևս։ Դա այն է,  
որ Ղազարի հարությամբ, Քրիստոսը կամե-  
ցել է նախապես նշել իր էլ հարության դեպ-  
քում։<sup>9</sup>

<sup>6</sup> Անդ, էջ 314:

<sup>7</sup> Անդ, էջ 314:

<sup>8</sup> Անդ, էջ 315:

<sup>9</sup> Ս. Վ. Ալմասունի, ճշված աշխատությունը, էջ 88—

39:

<sup>10</sup> Անդ, էջ 91:

<sup>11</sup> «Ծարական», էջ 91:

<sup>12</sup> Անդ, էջ 805:

թը, այսինքն, որ ինքն էլ է մեռնելու և հարությամբ մահը հաղթելու.

Այսօր գոյով ի Բեթանիա,  
Զքո զաշխարհակեցոյց  
Սուրբ յարութիւնը  
Յառաջագոյն ծանոցեր<sup>13:</sup>

Այս շարականներից մեկի մեջ էլ հետիւնակը Քրիստոսի կատարած աստվածային գործերի կողքին ներկայացրել է Նրա հանձնարդական ու մարդկային ու մարդական գծերը: «Որ ի չորեքեկրպական կենացնեաց» քանիով սկսվող շարականում աչքի է ընկնում Քրիստոսը իր կարեկցող և զգայուն սիրով: Նա սովորական մարդու պես լայն է՝ Մարդամի, Մարդայի և մյուսների հետ ու առաջ արցունք թափում Ղազարի մահվան սովորություն:

Մյուս շարականի մեջ բնորոշվում է Հիսուսը որպես՝

Աղքիր անմահութեան,  
Բըղիւեալ ի Բեթանիա<sup>14:</sup>

Այն Փրկիչը, ասում է շարականը, «յորմ դունան դասք հրեշտավաց», այսօր եկել է իր մեռած քարեկամի ու նրա քոյրերի մոտ նրանց միմիտարելու, սփոփելու համար.

Մարդասիրապէս արտասուցեր՝

Ոլրակցելով ընդ Մարդայի,  
Եւ ընդ Մարդամու<sup>15:</sup>

Այս մի քանի փոքրիկ շարականների մեջ Սահմակ Պարթևը, կարողացել է ներկայացնել Քրիստոսի ու միայն աստվածային գործությունն ու գործերը, այն ընդգծել է նրա մարդկային, զգայուն և մարդասիրական կողմերը:

Սուանձնապէս ուշագրավ է Ղազարի հարությանը նվիրված «Տուն տնօրէնութե.սն» բառերով սկսվող պարականուն Մեծացուցեն: Այստեղ, սովորաբար ինչպես և բոլոր Մեծացուցեների մեջ, գովերգվում ու փառաւանվում է Տիրամայրը՝ հաև նրա համար, որ աշխարհի համար ծնել է այնպիս մի Փրկիչ, որը մեռածներին անգամ կյանքի է կոչում Ըստ շարականի, Տիրամայրն է փորկության աղբյուրն ու կյանքի ակտունքը:

Տուն տնօրէնութեան և տաղաւար՝  
Բանին կենաց Բարձրելոյն<sup>16:</sup>

Եվ վերջապէս Տիրամայր իր հավասարը շունեցող, անզուգական է ու պանծալի, մայր է, ավելի քարձը՝ քան երկինքը, քանի որ նա կարողացել է իր արգանդում կրել «անբանելին երկնի և երկրի»:

Մարդամ, մայր պանծալի,  
Եւ քան զերկինս բարձրագոյն.

Որ բարձեր գրաբանողն բոլորից,  
Եւ հանգուցեր ի գիրիկս ըն<sup>17:</sup>

Այնունեան իրենց պարզ բովանդակությամբ և հոգականությամբ աչքի են ընկնում մի քանի որիշ շարականներ՝ Փրկչի մատությանը, խաչելության ու թաղմանը նվիրված: Թեև այս շարականները մի քանի հատ են, բայց բոլորի էլ հիմնական գաղափարը ընկնին է, որոնց ընդհանուր հանգուցն սկրսվում է «Խորհրդավոր ընթրիթի» ժամանակ, զարգանում և ապա հասնում իր զագարձականությունը ու լուծվում Քրիստոսի մահվամբ ու թաղմամբ:

Ավագ շաբաթի հինգշաբթի օրն է: Երեկո է: Վերջին ընթրիթի խորհրդավոր ու պրոտոպոչ պահն է: Շարականը ասում է.

...Այսօր Տէրն մեր լուանայր զուս աշակերտացն,

Եւ պատուիիրէր զայս ասելով՝

Մի ոնն ի ձէնչ, եղբարք,

Զիս մատնելոց է առ ի ման...<sup>18:</sup>

Այս հայտարարությունը ճեշող ազդեցություն է թողնում ասաբյալների վրա: Հզովում, ապա հետաքրքրվում են, թե ո՞վ է արդյոք այդ մատնիշը: Տիրում է ծանությունն, որովհետու

Բանն զոր ասաց Ցիսու,

Տրտեցոյց զիր զաշակերտսն,

Եւ խոլեցան ամենեքեան<sup>19:</sup>

Ապա պարզվում է, Ավագ որրար օրվա շարականներից, որ՝

«Արծաթսիրութեամբ մոլեալ Ցողա,

Զիր զգնեած վարդապետըն,

Ընդ երեսուն արծաթոյ նրէիցն մատնիշը»<sup>20:</sup>

Խիստ խորերով է բնութագրված մատնիշը, որը դադարել է ոչ միայն Քրիստոսի աշակերտը լինելուց, այլև որպես վատնողի և անարգ, արդեն կորցրել է մարդկային դեմքը և դարձել սատանա:

«Մերկացաւ ինքենէ զասուածային սուրբ հոգինն,

Եւ զգեցաւ զատանայ, որպէս համեկերձ արկա զիրեան<sup>21:</sup>

Մանկունք անունը կրող շարականու հատկապէս փառարանվում է Քրիստոսի համբերատարությունն ու երկանամսությունը: Թեև նա մատնվում է իր մոտիկ մարդունքով, ապերախտաբար, անարդառ դատապարտվում է, զանակություն ու խաչընում է, բայց նա էլի մնում է անհիշաշար, մարդաւաեր: Նա այդ բոլոր շաշարանքները

<sup>13</sup> Անդ, էջ 305:

<sup>14</sup> Անդ, էջ 305:

<sup>15</sup> Անդ, էջ 306:

<sup>16</sup> Ս. Վ. Ամառումի, Զշված աշխատաթյունը էջ 87:

<sup>17</sup> Անդ:

<sup>18</sup> «Շարական», էջ 337—338:

<sup>19</sup> Անդ, էջ 338:

<sup>20</sup> Անդ, էջ 341:

<sup>21</sup> Անդ:

համբերությամբ ու սիրով է տանում համուն մարդկության, հանուն մեղսագործ աղամորդու և աշխարհի փրկության: Այսպես.

Որ մարդասիրապէս վասն ամենեցուն,  
Ամենայնի համբերեցեր,  
Եւ ի մահու զմահ կոխեցեր<sup>22</sup>:

Ավագ շարաթ օրփա հշանավոր շարակա-  
նը նվիրված է Քրիստոսին՝ յաշատիպտից  
իշեցնելուն և թաղմանը: Այդ շարականը ըս-  
կրվում է «Պարզնատուն ամենեցուն» բա-  
ռերով: Փրկիչը, որ դեռ երեկ և մյուս օրը  
մեռելին հարություն էր տալիս, ամենքին  
կյանք պարզեւում ու սիրում, այսօր այդ նույն  
Փրկիչը զրկվել է կյանքից և խաչափայտի  
վրա՝ մահացել: Նա, որ ինքը անձան լոյս  
էր և ողջ աշխարհն էր լույսով ողղողում, այ-  
սօր Հովսեսի ձեռքով պատաճքվում է՝ գե-  
րեզմանի մեջ դրվելու համար: Ավելին, պի-  
տի մարդիկ խնդրեն Պիհատոսին, որ նա  
թոյլ տա Փրկչի մարմինը թաղելու համար:

Պարզնատուն ամենեցուն,

Այսօր խնդրի պարզելու ի Պիհատոսւ...  
Կենդանատուն ամենեցուն,

Այսօր դեմ ի նոր գերեզմանի...<sup>23</sup>:

Եթե Ղազարի հարության, Ծաղկազարդի  
և Ավագ հինգաբրի տոների շարականներուն  
աշքի են ընկնում պարզությամբ, հուզակա-  
նությամբ, ապա Քրիստոսի խաչելության և  
թաղման վերաբերող այս շարականները  
վերոհիշյալ հատկանիշների հետ միաժամա-  
նակ ունեն պատկերավորություն, հակադրու-  
թյուն և արտահայտչականություն.

Կենդանին յահտենից Քրիստոս,

Այսօր խնդրի որպէս մեռեալ ի Պիհա-  
տոսւ<sup>24</sup>:

Ամմահութեանց տըրող Քրիստոս,

Այսօր ի հող մահու խոնարհեցաւ...

Արեգակն արդարութեան Քրիստոս.

Այսօր եղաւ ի գրի ստուերականի...<sup>25</sup>:

Ամբողջ շարականի ընթացքում մի դրու-  
յունը, վիճակը պատկերավոր հակադրվում  
է մի ուրիշ դրության: Կուսածին կյանքը դրը-  
վում է գերեզման. արթունը ննջում է, ցըն-  
ծությունը վերածվում է սգի, արեգակը մըս-  
նում է գրի ստվերների մեջ, ճառագալիքի  
փոխարինում է խավարը և այլն:

Շարականագիրը խաչելության շորջ տեղ-  
ծում է ուժեղ պատկերներ և ինքն էլ ընկնում  
ծանր այլումների մեջ: Այսուղի արդեն նե-  
ղինակը Ավետարանի նյութը միայն մշակուլ  
կամ երգաբանող չէ: Ինքն էլ է հանդես գու-  
խու, որպէս խաչելության երկա, տառապող  
անձնավորություն և շարականի մեջ պրտա-  
հայտում նաև իր ներքին հովաքերը.

Ով սքանչելի տեսիլ և ահաւոր,  
Զարարիշըն երկնի և երկրի,  
Այսօր տեսաք ի խաչի<sup>26</sup>:

Բանատեղծի մոտ խաչելության երևույթը  
պյառքան ահեղ է ու մեծ, որ այն ցնցել է ամ-  
բողջ տիեզերքը.

Տեսեալ ըգծէրն ի խաչին,  
Խառարեցաւ արեգակն,  
Եւ վարագոյր տաճարին,  
Ցելոյր վերուստ մինչ ի վայր<sup>27</sup>:  
Սահակ Պարթևի գրած բոլոր շարական-  
ները վերաբերում են Ծաղկազարդի կիրա-  
կին և Ավագ շարաթի խորհրդին: Շարակա-  
նագիրը ավետարանական պատումները են-  
թարկել է ստեղծագործական, ինքնատիպ  
վերամշակման: Այս ամենի հետ զուգընթաց,  
այդ շարականները արտահայտել են նաև  
բանատեղծի ապրումները: Այս շարանաւ-  
ներով և Սահակ Պարթևը հիմք է դնում մեր  
ազգային, հոգայոր երգին: Հետագայում նրան  
հետևեցին շատ բանատեղծներ ու շարա-  
կանագիրներ, ինչպես՝ Մ. Մաշտոցը, Վ. Խո-  
րենացին, Հ. Մանդակունին, Կոմիտասը,  
Ստեփանոս Սյունեցին, Ն. Շնորհալին,  
Լամբրոնացին և ուրիշները:

<sup>22</sup> Անդ, էջ 345:

<sup>23</sup> Անդ, էջ 366:

<sup>24</sup> Անդ, էջ 366—367:

<sup>25</sup> Անդ, էջ 367:

<sup>26</sup> Անդ, էջ 344:

<sup>27</sup> Անդ:

